Վահան Տերյան

Դու գալիս ես մութ գիշերապահին...

Դու գալիս ես մութ գիշերապահին
Եվ լինում ես լուռ.
Ես չեմ հիշեցնում ցնորքներըդ հին,
Չեմ վրդովում քեզ խոսքերով տխուր:

Ես հասկանում եմ քո խենթ աչքերի
Հրրեղեն լեզուն,
Խոնարհ եմ լինում ես, որպես գերի,
Եվ տրտմության սև խոսքեր չեմ ասում:

Վառվում է մոմը դողդոջ փայլերով
Հեռու անկյունում,
Ելնումես անխոս, հպարտ քայլերով,
Մահապարտի պես այնտեղ ես գնում:

Եվ շշնջում է հագուստը թափվող
Վարագույրի մոտ,
Փռվում է դառը ցնծության մի դող
Ու ողջ աշխարհը դառնում է աղոտ...

Կանգնում ես դու մերկ, թագուհիդ՝ խոնար
Իսկ ես՝ քո գերին.
Քո թագավորն ու դահիճն եմ խավար

Եվ սահման չըկա չար տանջանքներին...